

Gr. Deepening creek

Deepening creek and Sinking Creek group -
creek many Sinking Creek

Deepening Creek 1936

902

2-15

5 OCT 2011

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՆՍԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հեռագրի իրավունքով

Հ. Ժ.
Ծ. Ե.

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԼՈՒՍԲԱԺԻՆ

Մեթոդական ոգնություն
պատմության դասասուններին

ՊԱՏՄԱԿԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կազմեց՝ Վ. ՂԱԶԱՋՅԱՆ

902
2-13

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՆՍԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՄԽՀ-1936 թ.
Մ. Ա. ՄԱՇԻՆԻԱՆ
ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

902
2-15
6

III Քմեսով վավիտով
0005 Բոմպի
6033 Ք միտով
դոկտոր
դոկտոր միտով

1009
389/62
4017

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական խրոնոլոգիայի յուրացումն ունի մեծ նշանակու-
թյուն պատմութեան դասավանդման համար: Առանց ժամանակա-
դրական տվյալներն իմանալու, առանց պատմական վորոշ դեպքե-
րի կոնկրետ—պատմական պայմանները յուրացնելու, պատմու-
թյունը կդառնա դատարկ արատրակցիա:

«Աշակերտների կողմից պատմութեան դասընթացը հաստա-
տապես յուրացնելու վճռական պայմանն է՝ պահպանել պատմա-
կան անցքերի պատմական—ժամանակագրական հաշտութեանը
բոլոր, անպայման ամբողջական աշակերտների հիշողութեան մեջ
պատմական կարեւոր յերեւոյթները, պատմական գործիչներին,
ժամանակագրական տարեթվերը»:

(ՀԱՄԿ(Բ)Կ Կենտրոնի և ԺԿՆ-ի 1934 թ. մայիսի 16-ի վո-
րոշումը և ՍՀՄ դպրոցներում քաղաքացիական պատմութեան դաս-
ավանդման մասին):

Ահա ինչու անհրաժեշտ է պատմութեան դասավանդման ըն-
թացքում լուրջ ուշադրութիւն դարձնել խրոնոլոգիային: Դա, ի
հարկե, չի նշանակում հին դպրոցի վերականգնումը, վորովհետեւ
մարքսիստական խրոնոլոգիան, ինքնանպատակ չե, ինչպէս նախա-
հեղափոխական դպրոցներում: Մարքսիստական խրոնոլոգիայի
նպատակն է տալ աշակերտներին լրիւ և պարզ պատկերացում՝
դասակարգային պայքարի հաշտութեամբ փոփոխւող ետապների և
դեպի պրոլետարիատի դիկտատուրան տանող ուղիների մասին,
ամբողջական աշակերտների հիշողութեան մեջ կարեւոր դեպքերը
և վորոշ ժամանակագրական տարեթվերը:

Պետք է ասել, վոր յերեւանները թույլ են ժամանակային
հարաբերութիւնների հասկացողութիւնից. անցյալը, ներկան և
ապագան շփոթում են:

Աշակերտները, վորեւ դեպքի մասին պատմելու կամ լսելու
ժամանակ, քիչ ուշադրութիւն են դարձնում ժամանակագրական

ովյալին. կենդանի հետաքրքրություն ուղղվում է միմյան դեպքեր վրա և վոչ թե ժամանակը վորոշելուն. ժամանակը լավ է յուրացվում յերեխայի կողմից այն դեպքում, յերբ կապվում է վորեկ կոնկրետ յերեվույթի հետ:

2. ԻՆՉ ԲԱՆԱԿՈՒԹՅԱՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՐԵԹՎԵՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՅՈՒՐԱՅՆԵԼ ՏԱԼ (5—7 ԴԱՍ.) ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆՐԱՆՑ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՈՒԾՆ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծանրաբեռնել թվական տվյալներով հարկավոր չէ, բայց իբրև ուղեցույց վորոշ տարեթվերի յուրացումն անհրաժեշտ է: Ժամանակագրական կմախքն անհրաժեշտ է դեպքերի հաջորդակա-նությունը կամ միաժամանակ կատարվելը լրիվ պատկերացնելու համար: Տարրական դպրոցում համեմատաբար ավելի քիչ է հարկավոր, քան սիստեմատիկ կուրսում, բայց յերկու դեպքում էլ խրոնոլոգիան պատմական ուսուցման անհրաժեշտ ուղեկիցն է:

12—14 տարեկան յերեխաները պարզ չեն պատկերացում 100—ամյակից ավելի ժամանակաշրջանի դեպքերի պատմական հե-ռավորությունը, կամ դրությունների տեվողությունը, ուստի պետք է խրոնոլոգիական վոչ կարեվոր տվյալներով չճանաչեաներ:

Մանկավարժորեն սխալ է կարծել, թե շատ թվական տվյալ-ներ պետք է սովորեցնել, վոր քիչը մտքերում պահեն, ընդհակառա-կը—հիշողության մեջ վորոշ տարեթվեր պահելու համար, պետք է քիչ, բայց եյական տարեթվեր սովորեցնել: Պետք է դասա-դրքից առանձնացնել միմյուր ժամանակագրական տարեթվեր և լավ յուրացնել տալ: Մի քանի դասառուներ տարեթվերի քանա-կը հասցնում են 100—150-ի մի դասարանում, դա շատ շատ է, աշա-կերտների համար հիշելու ուժից վեր է. յեկնելով դպրոցական պրակ տեկայից և բաղմաթիվ մեթոդիստների կարծիքներից, պեղք է ընդունել, վոր միջնակարգ դպրոցում մի տարվա 80 ժամվա դաս-լնթացի համար միմյուր, որիենտիր կերպով, կարելի չէ սահմա-նել 40—60 պատմական տարեթվեր, իսկ 5-րդ դաս. մինչև 30: Այդ տարեթվերը ճիշտ ընտրելու դեպքում, իսկապես կդառնան ուղեցույց նշանաձողեր, հենակետեր սովորած պատմական նյութը ժամանակի մեջ տեղավորելու և լրիվ ըմբռնելու համար: Դասա-գրքում կարող է շատ տարեթվեր լինել, քան թե պետք է յու-րացվեն աշակերտների կողմից:

3. ԻՆՉԴԵՍ ԸՆՏՐԵԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՑԵՎ ԱՄԵՆԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՐԵԹՎԵՐԸ

Յարական դպրոցների դասագրքերն աչքի անցկացնելու նկատվում է խոշոր սոցիալական շարժումների տարեթվերի բա-յակալությունը, որինակ. միջին դարերի պատմության վերաբե-րյալ չկա վոչ ժակերիայի «Չոմպի»-ների ապստամբության, վոչ Տայերի ապստամբությունը և այլն:

Դասակարգային պայքարը չի արտացոլված այդ ժամանա-կագրական տարեթվերում, դրա փոխարեն մեծ ուշադրություն է նվիրված յեկեղեցական պատմության, թագավորական ընտանիք-ների վիճակի հարցերին:

Հին դասագրքերից վերցրած խրոնոլոգիայով չի կարող դե-կավարվել խորհրդային դպրոցը, վորովհետև նրա մեջ արտացո-լված է մեղ թշնամի պատմական կոնցեպցիան:

Մարքսիստական պատմությունը զանազանվում է բուրժուա-կանից վոչ միայն գլխավորապես արված դեպքերի բացատրու-թյամբ ու գնահատականով, այլ և հենց դեպքերի, յերեվույթ-ների ընտրությունը. այն, ինչ վոր գտնվում է բուրժուական պատ-մաբանի ուշադրության կենտրոնում, հաճախ մարքսիստ—հետա-դոտոգի համար ներկայացնում է մի հնչին նշանակություն ու-նեցող դեպք և ընդհակառակը:

Տարեթվերն ընտրելիս պետք է հաշվի առնել տվյալ պատ-մական շրջանի դասակարգային պայքարի կարևոր դեպքերը, պե-տությունների կազմվելու և պետական կարգերի դրդացման պատ-մության հիմնական տարեթվերը, արտաքին քաղաքականության պատմության և կուլտուրայի պատմության խոշոր փաստերը: Որինակ— հին դարի պատմությունից հանձնարարելի յե վերցնել սուրջ 30 տարեթվեր:

5-րդ դասարանում

6 տարեթիվ— Յեզիպոսի պետության վերաբերյալ:

8 » » Միջագետքի հին պատմությունների՝ Ասորեստա-նի, Սալդեյայի և այլն:

16 » » Հունաստանի վերաբերյալ:

6-րդ դասարանում

25—30 տարեթիվ— Հռոմի պատմությունից:

10—15 տարեթիվ— միջին դարի պատմությունից:

Ընդամենը 40:

7-րդ դասաճանձն

10 տարեթիվ-Անդրիայի պատմութեան վերաբերյալ:		
8 —»— Դերմանիայի	»	»
8 տարեթիվ Յրանսիայի պատմութեան վերաբերյալ:		
2 —»— Ետալիայի	»	»
4 —»— Իսպանիայի	»	»
8 —»— Այլ յերկրներ	»	»

Հնդամենք 40:

Ահա նմուշներ տարեթիվի քանակի մասին.

Վեց տարեթիվ—յ երկուսուկու պատմութեան վերաբերյալ

Պայքար յեղիպտական նոմերի միացման համար 3500 մ. դ. ա.
Մեծ բուրգերի կառուցող փարավոնները (Քեոպս) 2800 —» —»
Ստրուկներ, չքավոր գյուղացիներ և արհեստ.

ապստամբութիւնը մոտ 1750 —» —»

Թամզես 2-րդ և նրա պայքարը Սիրիայի համար 1300-1280 —» —»

Սալիսյան շրջանի փարավոնները 600—529 —» —»

25 տարեթիվ—Հռոմի պատմութեան վերաբերյալ

1. Թագավորի իշխանութեան վերացումը և հան-
րապետութեան հաստատումը 6-րդ դար մ. դ. ա.
2. Պատերիկների և պլեբեյների պայքարը 5—4 դար մ. դ. ա.
3. 1-ին կարթագենյան պատերազմը 264—241 թ. —»
4. Մակենդոնիայի, Հունաստանի և Կարթագենի
գրավումը 148—146 թ. —»
5. Ստրուկների 1-ին ապստամբութիւնը
Սիցիլիայում 136—132 թ. —»
6. Տիրերիոս Գրակտուսի ընդունումը 123—121 թ. —»
7. Մարիուսի զինվորական « 108 թ. —»
8. Ստրուկների 2-րդ ապստամբութիւնը
Սիցիլիայում 104—101 թ. —»
9. Սուլլայի զիկտատուրան 82—79 —»
10. Ստրուկների մեծ ապստամբութիւնն Սպար-
տակի գլխավորութ. 74—71 թ. —»

11. Պոմպեոսի նվաճումներն Ասիայում 66—62 թ. —»
12. Կատիլինայի դավադրութիւնը և կործա-
նումը 63—62 թ. —»
13. 1-ին տրիումփրատը 60 թ. —»
14. Պայքար Յեզուսի և ՊՈՄՊԵՅՏԻ միջև 49—48 թ. —»
15. 2-րդ Տրիումփրատը 43 թ. —»
16. Ոգոստոս կայսեր կառավարումը 30—14 թ. —»
17. Ներոն 54—68 թ. —»
18. Տրոյանոս 100—117 թ. —»
19. Մարկ Ավրելիոս 161—180 թ. —»
20. Դիոկլետիոն 285—305 թ. —»
21. Կոնստանդին 305—337 թ. —»
22. Արևելյան կայսրութեան ջախջախումը 379 թ. —»
23. Հռոմ. կայսրութեան 2 մասի բաժանվելը 394 թ. —»
24. Հռոմի գրավումը Ալլարիի կողմից 410 թ. —»
25. Արևմտյան Հռոմ. կայսրութեան անկումը 476 թ. —»

4. ԻՆՉ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ, ՅԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ, ԱՊԱՀՈՎԵԼ ԽՐՈՆՈԼՈԳԻԱՅԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ

Խրոնոլոգիայի յուրացումն ավելի մեծ դժվարութիւնն է ներ-
կայացնում 5-րդ դասարանում, քան մյուսներում և զա հասկանա-
լի չէ. աշակերտներն սկսում են 5-րդ դասարանում ուսումնասի-
րել պատմութիւնը, չունենալով պատկերացում պատմական ժամա-
նակի մասին. 2-րդ՝ մեծ դժվարութիւնն է ներկայացնում աշակերտնե-
րի համար ժամանակի յերկու տեսակի հաշվումը, ժամանակի հաջոր-
դականութեան կրկնակի սխառմը—խրոնոլոգիայի նվազող հա-
ջորդականութիւնը մինչ մեր երան և աճող հաջորդականու-
թիւնն մեր երայից հետո: Այդ դժվարութիւնները հնարավոր է
հաղթահարել հետևյալ միջոցներով.

1) Ժամանակային հարաբերութիւններ կարելի չէ փոխադրել
ստորագրած ձեւերի մեջ, փոփոխեով ստորագրած պատկերն ավելի
լավ և հաղթելով:

Ժամանակային հարաբերութիւնների հաջող դիտողական
ըլլուստրացիաներ կատարելու յեղանակները մասին փորձեր յեղել
են անցյալում, որինակ՝ 1818 թ. Յ. Ստրաուսի կողմից «Ժամանա-
կի գիտեր». Ժուկովսկի և Սոկոլով 1889 թ. «Համաշխարհային
պատմութեան նոստեր»: Սիմկովի կամ գրաքիի դիտողականութեան

հարցը նորից բարձրացրեց անգլիական մանկավարժ Ս. ԴԱՄՍՈՆԷ. նա «ժամանակի գրաֆիկոն» բաժանեց 100-ամյակների և 10-ամյակներին. պատմական դարաշրջանները բաժանում է իրարից զանազան գույներով:

Խրոնոլոգիան տարածական պատկերի վերածելու նման փորձ Ռուսաստանում կատարել է Վասկարոյնիկովը («Вестн. вост.» 1915 թ. դիրք № 9):

Նա սովորեցնում էր աշակերտներին՝ նախ գրաֆիկայով պատկերացնելու իրենց կենսագրությունը, ընդունելով մասշտաբ 13 սմ. — 12 տարի, 1 սմ. — 1 տարի:

Յ — կետում նշանակում է աշակերտի ծնունդը, իսկ հետո իր կյանքի կարևոր դեպքերը:

Այնուհետև անցնում են պատմության կարևոր դեպքերը պատկերացնելու. մասշտաբ 10 սմ. — 1000 տարի, 1 սմ. — 100 տ., 1 մմ. — 10 տարի: Դարը պատկերացնելու համար կարելի չէ յերեխաներին բացառել, վոր այնքան է, վորքան 10 տարեկան յերեխան ապրել 10 անգամ ավելի:

Շատ կոդնի պատրաստել հիմնական տարեթվերի դասարանական պատի աղյուսակներ: Վորոշ արժեք են ներկայացնում պատմական պրոցեսի ընթացքը գրաֆիկով պատկերացնող դիտողական պարագաները:

Յ-րդ դասարանում նման գրաֆիկ վարժություն կարելի չէ անել դասարանում (ուսուցիչը գծում է գրատախտակին, իսկ աշակերտները աշխատանքի տեսրակներում), այսպես՝

նկ. № 1

ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱՖԻԿԱ

Մասշտաբ	Տարեթվեր	Ինչ դեպքեր են կատարվել
40 —		
—		
—		
—		
36 —		
—	3500 թ. մ. եր. ա.	

Մ ե ը թ վ. ա ո ա ջ.

33 —
—
—
30 —
—
—
27 —
—
—
24 —
23 —
22 —
21 —
20 —
19 —
18 —
17 —
16 —
15 —
14 —
13 —
12 —
11 —
10 —
9 —
8 —
7 —
6 —
5 —
4 —
3 —

2850-2700 մ. եր. ա. Մեծ բուրգերի կառուցող փարավոններ (Քեոպս)

1750 մ. եր. ա. 2-րդ դյուղաց. ըստ բուկների ապստամբությունը

1300-1280 մ. դ. ա. Ռամզես 2-րդ և պայքար Սիրիայի համար

600-525 մ. դ. ա. Սալիսի փարավոնները

2—			
1—0			
0			
1—			
2—			
3—			
4—	476 մ. դ. հ.	Արևմտյան Հռոմ. կայսրություն անկումը	
5—			
6—	632 »	Խալիֆաթի սկիզբը	
7—			
8—			
9—			
10—			
11—	1096-1099 »	1 խաչակրաց արշավանքը	
12—			
13—	1358 »	Ժակերիա	
14—			
15—	1453 »	Բյուզանդիայի գրավումը թուրք. կողմից	
16—			
17—	1789 »	Ֆրանսիական մեծ հեղափոխություն.	
18—			
19—	1935 թ. »		
20—			

Հնդուները, վոր տետրակի մի յերեսը հավասար է գրատալի մակերեսին. գծում ենք մի ուղղահայաց և մի հորիզոնական հատող գիծ. հատվող կետում նշանակում ենք 0 տարի.

հորիզոնական գծից վերև նշանակում ենք մեր թվականությունից (երա) առաջ, իսկ ներքև մեր թվականությունից հետո. 0-ից դեպի վերև բաժանենք 40 մասի, դեպի ներքև 20 մասի, ամեն մասն ընդունենք 100 տարի, վերցնենք Յեգիպտոսի պատմությունից տարեթվեր և նշանակենք (քաբտի, գրատալիտակի) տետրակի վրա (տես նկար № 1. ժամանակի գրաֆիկա): Յեթև տետրակի մի եջը չբավարարի, բացում ենք տետրակն ախպես, վոր յերկու յերեսն իրար շարունակություն կազմեն:

Այսպիսի գրանցում կատարել ենք տալիս մինչև այն ժամանակ, յերբ աշակերտները կսկսեն կողմնորոշվել խորհուրդիական տարեհաշիվները հաջորդականությունը, մոտավորապես 5-րդ դարանի 1-ին կիսամյակի վերջը, վորից հետո աշխատանքի տետրերում կգրանցեն առանց՝ գրաֆիկների և մասշտաբի, այսպես.

Որինակ՝

Տարեթվեր	Դեպքեր և պրոցեսներ	Տարեթվեր	Դեպքեր և պրոցեսներ
1908 թ.	Հեղափոխ. Տաճկաստանում	1911 թ.	Հեղափոխ. 2ինաստանում:
476 թ.	Արևմտ. Հռոմ. կայսրության անկումը:		

2) Տարեթվերը հիշողության մեջ ամրացնելու լավագույն միջոցներից մեկն է հաճախակի կրկնելը, անհրաժեշտ է յուրաքանչյուր դասից 2-3 ըուպե հատկացնել հիմնական տարեթվերի կրկնողությանը, սակայն այնպես, վոր դասի բովանդակության հետ ստեղծվի անմիջական կապ:

Տարեթվերի կապակցելն ու համադրելը ներկայացնում են գիտակցական կրկնողության մի տեսակը պատմության դասավանդման մեջ:

Ահա մի քանի տիպի հարցեր, վորոնք ամրացնում են խորհուրդիան (կապակցման) զուգորդման և համադրման միջոցով:

ա. թվեցեք X յերկրի պատմության տմենակարելոր տարեթվերը.

բ. Համադրեցեք զանազան յերկրների պատմությունից միաժամանակ կատարված դեպքերն իրար հետ. ի՞նչ կատարվեց Գեր-

մանխայում 16-րդ դարում, իսկ ի՞նչ կատարվեց նույն դարում ուրիշ յերկրներում:

զ. Համադքել ժամանակի մեջ գանազամ յերկրների պատմության մեջ ի՞նչ փոփոխություններ:

Որինակ՝ յերբ կատարվեց գյուղացիական ապստամբությունը Փրանսիայում, յերբ Անգլիայում, կամ յե՞րբ կատարվեց ըուրթուական հեղափոխությունը Անգլիայում, իսկ յե՞րբ Փրանսիայում:

զ. Խմբավորել մի վոտիվ հարցի վերաբերյալ տարբեր, որի նաև անցնելով գյուղացիական պատերազմը Գերմանիայում, առաջարկում ենք աշակերտներին հիշել ուրիշ յերկրներում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունները և ասել նրանց տարբերվելը:

յե. Վորո՞ճել այս կամ այն պատմական պրոցեսի տեղի ունեցողը, կամ պարզել յերկու խրոնոլոգիական նշանաձողերի տարածությունը, որինակ. վորքան ժամանակ է անցել Ամերիկայի գյուտից մինչև ստրկություն վերացումը ԱՄՆ-ում: Հոկտեմբերյան հեղափոխությունը Փարիզյան կոմունայից քանի տարի հետո յեղավ:

Նման հարցեր կարելի յե տալ նաև ստուգողական աշխատանքների ժամանակ:

զ. Յերկար ժամանակ դանազան յերկրների պատմությունն անցնելուց հետո, կարելի յե աշխատանքի տետրակներում կազմել տալ համաժամանակագրական (սինխրոնիստական) աղյուսակ (գեղեցիկ որինակ կարելի յե վերցնել Պակրովսկու ռուսաց պատմության դասագրքից): Այս դեպքում պետք է պահպանել ամենակարեւոր տարեթվերը, վորպեսզի աշակերտները կարողանան ընդգրկել պատմական ֆորմացիայի զարգացման հիմնական ետապները, տեսնեն և հասկանան պատմական պրոցեսի խոշոր շրջագարձերը:

Տես ներքեւում բերված աղյուսակի ձևերը:

Սինխրոնիստական աղյուսակ, ձև № 1

(համաժամանակագրական)

Դարեր	Համաշխարհային պատմության գլխավոր դեպքեր	Միջուկային պատմություն	Արտաքին պատմություն գլխավոր դեպքեր	Ներքին պատմություն գլխավոր դեպքեր
5-7 դ.	Արեւելյան կայսրության ծաղկումը, վորը Հուստինիանոսի թագավորի ժամանակ	Բազմաթիվ պատերազմներ	Սլավոնների արշավները Հուստինիանոսի կայսրության	Բյուզանդական զորքերի պատմական դերը սլավոնների մասին

ժամանակ (527-565) գրավում է համարյա Միջերկրական ծովի ամբողջ ավազանը: Ստոր կական և ճորտ աշխատող հիման վրա առաջանում է փայլող Բյուզանդական կուլտուրան:

Ծով ծովի մոտ:

վրա: Բյուզանդական կառավարությունը նրանց դեմ կառուցում է պաշտպանողական գիծը Դանուբի յեղրով:

վորպես վայրենիների. Թափառական յերկրագործութ. ապրում են տոններով:

ԾԱՆՈԹ.— Այսպիսի աղյուսակներ կարելի յե կազմել միայն 8-րդ դասարանից սկսած, հատկապես 9 և 10 դասարաններում:

Համաժամանակագրական աղյուսակ

Ձև № 2

Դարեր	Իտալիա	Ֆրանսիա	Անգլիա	Գերմանիա և Նիդերլանդներ	Իսպանիա և Պորտուգալիա	Բալկանյան յերկրներ և Բյուզանդիա
14-1301-1400	Վենետիկի և Ջենովայի հարստության ու հզորության աճը: Ջենովան ամբողջությամբ կառուցում Սև ծովի և Ղրիմի ափերին:	1502 թ. առաջին գլխավոր շտատների գումարումը: Մասնակի կերպով գյուղացիները ազատվում են փրկանքավճար տալով:			Առևտրի և արդյունաբերության զարգացումը Արագոնիայում:	Սերբիայի բարձրանումը (1531-1555 թ. Մտեֆան Դուշանի կառավարումը): Թուրքերի հարձակումը Բյուզանդիայի վրա:

3) Խրոնոլոգիայի հարցերից կան յերկուսը, վորոնք ներկայացնում են բավականին դժվարություն, նույնիսկ այն աշակերտների համար, վորոնք հիշտությամբ են յուրացնում ժամանակագրական թվականները:

Ա. ԴԱՐԻ ՀԱՐՑԸ.— Հաճախ նկատելի չե, վոր նույնիսկ ընդունակ աշակերտները 868 թվականը համարում են 8-րդ դարում կամ 1861 թ. 18-րդ դարում:

Այդ խնդիրը պարզելու համար դարը վորոշելի դժվարացող աշակերտին հարցնում են՝ «Ժամի քանիսն է յեթե ժամացույցը ցույց է տալիս ժամի 9-ը և 10 րոպե, ժամի 9-ը և 25 րոպե և այլն», — այդ հարցին ամեն մի աշակերտ կպատասխանի՝ «տասերորդ», կամ թե՛ չե «հարցնում ենք տարիքի մասին» «քանի տարեկան ես, յեթե լրացել և քո 12 տարին և 3 ամիսը» «տասներեքի մեջ» (տասներեքերորդ):

Նման պատասխաններ ստանալով հարցնում ենք. «վո՞ր դարը կլինի, յեթե անցել և ութը հարյուր և վաթսուներեք տարի, կամ անցել և մի հազար ութիսորդուր և վաթսունմեկ տարի, մի հազար և 15 տարի»:

Բացի նման տեխնիկական յեղանակից, շատ ոգտակար կլինի տարեթվերը գրատախտակի կամ աշխատանքի տետրակում գրելին թվականի կողքին փակագծի մեջ գրել նաև դարը. որինակ՝ 1861 (19 դ.), 1789 (18 դ.), 1492 (15 դ.) և այլն:

Նույնը կատարել և սինխրոնիստական աղյուսակներում:

Բացի դրանից, այս կամ այն պատմական դեպքի խրոնոլոգիան լավ յուրացնելու համար նպատակահարմար և ոգտագործել ինչպեսի դասի, նույնպես ել կրկնողության ժամանակ այսպիսի յեղանակ՝

1) Դասատուն ասում է կատարված այս կամ այն դեպքի դարը, իսկ աշակերտը պիտի պատասխանի, թե ինչ դեպք է կատարվել այդ դարում:


2) Դասատուն ասում է դեպքը, իսկ աշակերտը պիտի պատասխանի, թե վոր դարումն է կատարվել այդ դեպքը:

3) Դասատուն առաջարկում է աշակերտներին հիշել և համադրել յերկու կամ ավելի տարբեր դեպքեր, վորոնք կատարվել են միաժամանակ զանազան յերկրներում. որ. Չարտիստ. 3-րդ հտապը Անգլիայում, փեարվարի հեղափոխութ. Ֆրանսիայում, մարտյան հեղափոխութ. Դերմանիայում կատարվել են 1848 թվին:

Բ. Տարեհաթիվը միեջեղ մեծ թվահամարում (երա) աշակերտները բավականին դժվար են յուրացնում, մանավանդ, վոր «մեր թվականությանից առաջ» (երա) տարեհաշիվները 4-րդ կամ 5-րդ դասարանի աշակերտներին և բաժին ընկնում, վորոնք դեռ ևս լավ պատկերացում չունեն հեռավոր պատմական անցյալի և որացույցի ծագման մասին:

Նախ պետք է բացատրել աշակերտներին որացույցի ելությունը և մեր տարեհաշիվի սկիզբը՝ պատմության և գլխավորապես աշխարհագրության դաստոտունների կողմից: Յերբ այդ հարցը բոլորովին պարզ կլինի աշակերտներին, դժվար չի լինի այնուհետև մինչև մեր թվականից առաջ (երա) կատարված պատմական դեպքերի խրոնոլոգիան յուրացնել տալ: Այս դեպքում պետք է պահանջել առաջին ցույց տալու վոչ սիտյն տարեթիվը, այլ անպայման ավելացնելու «83 թվին մեր թվականից առաջ» կամ «83 տարի մեր թվականից առաջ»: Այսպիսի ընդգծումը կնպաստի խրոնոլոգիան հիշողության մեջ ամրացնելու: Նույնպես պետք է վարվել դարերով հաշվելով. «առաջին Ուիկտորիան յեղավ 8-րդ դարում մեր թվականից առաջ (776 թ.)»:

Տարեհաշիվի այս սիստեմն ավելի դիտողական դարձնելու համար կարելի չե ոգավել նաև ժամացույցի թվացույցից սլաքի շարժումը հակառակ ուղղությամբ շրջելով: Վերցնենք մի քառակուսի ստվարաթուղթ ամեն կողմն հավասար լինի $\frac{1}{4}$ մետրի և վրան դժագրենք այսպես՝



Մասշտաբ 1 րոպեն հավասար է 100 տարի

0-նշանակում ենք մեր թվականի սկիզբը: 0-ից դեպի ձախ՝ մեր թվականից առաջ, դեպի աջ՝ մեր թվականից հետո: Հետո

հարցնում ենք աշակերտին, թե 1935 թվականից քանի տարի առաջ ե տեղի ունեցել ստրուկների ապստամբությունը Յեզիպտոսում:

Այդ դեպքը տեղի չե ունեցել մեր թվականից 1750 տարի առաջ, մեր թվականից հետո ել անցել ե 1935 տարի, ընդամենը 5685 տարի առաջ: Այսպիսի տարեհաշիվը կնպաստի պայմանական հեռավորություն ըմբռնելու:

ՄԻ ՓԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՌԵՍՈՒՅՅԻ ՀԱՄԱՐ

Խրոնոլոգիայի կապակցությամբ պատմության դասատուն պետք ե վերհիշի ե լավ ուսումնասիրի հետևյալ հարցերը՝

- 1) Որացույցի ծագումը:
- 2) Յեզիպտական որացույցը:
- 3) Հուլիանական որացույցը (հին տոմար):
- 4) Գրիգորյան որացույցը (նոր տոմար):
- 5) Վոր որացույցն ե ավելի ճիշտ:
- 6) Երա (թվականություն), գաղափարը դրա մասին:
- 7) Երա—աշխարհի ստեղծագործությունից, Դիոկետիանոսից:
- 8) Երա Քրիստոսի ծննդից (մեր թվականության սկիզբը):
- 9) Հոկտեմբերյան երան:
- 10) Պետրոս Մեծի ե հետագա ընթրմներն որացույցի մասին:
- 11) Որացուցային փոփոխությունները խորհրդ. իշխանության որոք:

Ոգտագործել կարելի չե հանրագիտական մեծ բառարանը կամ М. Матве и И. Шолом прошлое, настоящее и будущее календаря.


Սույն մեթոդական նամակում անհրաժեշտ ենք համարում պարզել վերոհիշյալ հարցերից սեղմ կերպով միայն մեկը.

Ի՞նչու մեր թվականության (երայի) սկիզբը համարում ենք Քրիստոսի ծննունդը. ինչպես ե դա ծագել:

6-րդ դարում մի հռոմեացի վարդապետի Դոնիլի, Փոլո անունով, հանձնարարվում ե կազմել յեկեղեցական—գաղական շարժական տոների ցուցակը. այդ ցուցակը կազմելիս նա հանդիպում ե այնպիսի մի փաստի, վոր քրիստոնյաներն իրենց տարեհաշիվն սկսում են Դիոկետիանոս կայսեր ժամանակից (Դիոկ-

դետիանոսի երա)՝ վորը «հեթանոս» եր ե իբրեվ թե «քրիստոնյաներին հալածողը»:

Դիոնիսիս, վոր ապրում եր Դիոկետիանոսի երայով 248 թվին, վճռեց, վոր ավելի նպատակահարմար ե տարեհաշիվն սկսել քրիստոնեյությունից հետ կապված վորեկ մոմենտից. նա առաջադրեց սկսել «քրիստոսի ծննդից», վորպիսին յերբեք տեղի չեր ունեցել. ուստի չեյին ել կարող խմանալ թե յիրը ե ծնվել, բայց Դիոնիսիս «հաշվեց» իբր թե այդ դեպքը—քրիստոսի «ծնունդը» տեղի չե ունեցել Հռոմ քաղաքի հիմնադրումից 754 տարի հետո*):



Այս ցուցմունքների խորացած ե սխառեմատիկ իրականացումը խոշոր չափով կրարելավի պատմական խրոնոլոգիայի յուրացումը մեր գլոբոսներում, վորը հանդիսանում ե քաղաքացիական պատմության դասավանդման վորակի բարձրացման կարեվոր ողակներեց մեկը:

Ուսուցչի խնդիրն ե՝ պատվով կատարել այդ դրոժը:



4

Հայաստանի Ազգային գրադարան



NL0427202

18836